Արձանագրության պրեամբուլա
Համագործակցության համաձայնագիր

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մենք, Հայաստանի Հանրապետության Վայք համայնքի ղեկավար Հարություն ՍԱՐԳՍՅԱՆԸ և Ռումինիայի Բակաու նահանգի Թրգու Օկնա քաղաքի քաղաքապետ Շտեֆան ՇԻԼՈՔԻՆ, ընդառաջելով երկու քաղաքների բնակչության ցանկությանը եւ իրական պահանջներին, գնահատելով մեր պատմական կապերը, ազատության ընդհանուր ոգին, բարեկամությունը, որը ոգեշնչում է մեր ազգերին, հանդիսավոր պարտավորություն ենք ստանձնում միջոցներ ձեռնարկել կնքելու Համագործակցության համաձայնագիր Հայաստանի Վայք համայնքի եւ Ռումինիայի Բակաու նահանգի Թրգու Օկնա քաղաքի միջև:

Համատեղ համաձայնությամբ, որոշում ենք սույն Բարեկամության պայմանագրի շրջանակներում իրականացնելու հետեւյալ հիմնական նպատակները.

- մշտական համագործակցություն մշակույթի, գիտության, արվեստի եւ սպորտի բնագավառներում,
- զբոսաշրջության ոլորտում զարգացման ծրագրերի մշակում,
- երկու քաղաքների բնակչության և հաստատությունների միջեւ տարաբնույթ կապերի հաստատում,
- անհրաժեշտ ջանքերի գործադրում մեր համայնքների միջեւ բարեկամության եւ համագործակցության կապերի խթանման համար,
- համատեղ միջոցառումների կազմակերպում մեր համայնքների ոգու եւ ավանդույթների դրսեւորման նպատակով,
- երիտասարդության շրջանում համագործակցության ծրագրերի իրականացում ազատության ոգուն եւ մեր համայնքների միջեւ բարեկամությանը նպաստելու նպատակով,
- փոխշահավետ տնտեսական հարաբերությունների զարգացում:

Սույն Բարեկամության պայմանագիրը ներկայացնում է մեր համատեղ կամքը՝ հնարավորինս կարճ ժամանակում ավարտին հասցնելու պաշտոնական բարեկամացումը, մանրամասնելու եւ կոնկրետացնելու թվարկված նպատակները՝ այսպիսով հասնելով տեւական եւ արդյունավետ կապերի հաստատման:

Կնքված է Վայք քաղաքում, 26 սեպտեմբերի 2014թ, երկու հավասարազոր բնօրինակով, հայերեն եւ ռումիներեն:

Հարություն ՍԱՐԳՍՅԱՆ
Վայք համայնքի ղեկավար

Շտեֆան ՇԻԼՈՔԻ
Թրգու Օկնայի քաղաքապետ